

ՆՐԱ ՂԵԿԱՎԱՐԱԾ ՈՒ ԿԱՏԱՐԱԾ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԼՈՒՅՍ ԱՇԽԱՐՀ ՀԱՆԵՑԻՆ ԱՆԻԻ ԿՈՐԾԱՆՎԱԾ ՊԱԼԱՏՆԵՐՆ ՈՒ ՏԱՃԱՐՆԵՐԸ ԼՐԱՑԱՎ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԸ

Համաշխարհային ճանաչման արժանացած ակադեմիկոս Նիկողայոս Մառի անունը անխափ- լիորեն կապված է հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի ուսումնասիրման հետ: Ընդհանուր դար այդ անվանի գիտնականը, արևելագետը, հայագետը և լեզվաբանը անդադրում ուսումնասի- րում էր հայ ժողովրդի պատմությունն ու մատե- նագիտությունը, լեզուն և ճարտարապետությունը, բանահյուսությունն ու արվեստը: Նա առաջինն էր, որ լուրջ գիտական հիմքերի վրա դրեց հայկա- կան միջնադարյան հնագիտությունը, և նրա ղեկավարած պեղումներն էին, որ առաջին անգամ լույս աշխարհ հանեցին միջնադարյան Հայաստա- նի շքեղապարզ մայրաքաղաք Անիի կործանված պալատներն ու տաճարները, բնակելի տներն ու խաչքարերը, փողոցներն ու ջրմուղը:

Նիկողայոս Մառը ծնվել է 1865 թվականի հունվարի 7-ին Քուրթայիում: Նախնական կրթու- թյունը հայրենի քաղաքում ստանալուց հետո ընդունվել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժինը: Ավարտելով համալսարանը, Մառը որոշել էր վերադառնալ իր ծննդավայրը, սակայն ընդունում է իր դասա- խոս և ուսուցիչ Քերովբե Պատկանյանի առաջար- կը՝ պատրաստվելու հայկական բանահյուսության պրոֆեսուրայի համար՝ մույն համալսարանում: 1890 թվականին Մառը առաջին անգամ լինում է Հայաստանում, ուսումնասիրում էջմիածնի ու Սևանի վանքերի ձեռագրերը և պատրաստում միջնադարյան հայ գրականության իր մագիստրո- սական դիսերտացիան:

Պրոֆեսոր Քերովբե Պատկանյանի մահից հետո, 1891 թվականին Մառը նշանակվում է հայագիտության ամբիոնի պրիվատ-դոցենտ: Իր առաջին դասախոսության մեջ, որը վերաբերում էր հայ գրականության ուսումնասիրության հարցերին, Մառը պարզաբանում էր, որ մինչ այդ Հայաստանի պատմությունը և հայ գրականությու- նը հարկ եղած չափով չեն ուսումնասիրված: Այդ նպատակով նա մանրակրկին ուսումնասիրության է ենթարկում Եղիշեի, Եվնիկի, Ղազար Փարպեցու, Մխիթար Գոշի գործերը:

Խոսելով Մովսես Խորենացու մասին, Մառը գրում է. "Հին հայկական պատմիչներն ինչ որ սփինքսներ են, իսկ նրանց մեջ Խորենացին սփինքս հսկա: Նա իր մեջ վառ կերպով արտա- ցուլել է հայկական մտավոր կյանքի մի ամբողջ ժամանակաշրջան, ուստի և դարձել է ազգային կուռք: Խորենացու կուլտը վաղուց է արմատները ձգել հայոց մոտ, նրա մասին, ինչպես այդ առասպելական դեմքերի հետ է տեղի ունենում, ստեղծվել են սրբաբան ավանդույթներ":

1892 թվականին Մառը երկրորդ անգամ է գործուղվում Հայաստան: Նա ձեռնարկում է Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Անիի պեղման աշխատանքները, որը ընդմիջումներով տևում է ավելի քան 25 տարի: Մառի ուսումնասի- րությունները քարը քարի վրա չթողեցին հնագի- տության բնագավառում եղած ավանդական պատկերացումները, և այնտեղ, որտեղ մինչև Մառը ենթադրվում էր անկում և հետադիմություն, նրա ջանքերով բացվեց վարդապետ մի փայլուն շրջան՝ նշանավորված Կովկասի ժողովուրդների բարիդրացիական հարաբերություններով:

1900 թ. Մառը նշանակվել է Պետերբուրգի համալսարանի հայ-վրացական բանահյուսության ամբիոնի վարիչ: 1901-ին պաշտպանել է դոկ- տորական դիսերտացիա "Իպպոլիտ-մեկնություն երգ-երգոցի" թեմայով և ստացել նաև պրոֆե- սորի կոչում:

1900-ական թվականներին Մառը հրտարակեց "Հայ-վրացական բանահյուսության տեքստերի և հետախույզումների" առանձին սերիա, որով հիմք դրվեց կովկասագիտությանը և հայ-վրացական բանահյուսության հատուկ դպրոցին: 1903-ին նա լույս է ընծայել "Հին հայերենի քերականությունը" (ռուսերեն) աշխատությունը: 1909-ին ընտրվել է Ռուսական կայսերական ակադեմիայի ակադեմի- կոս: 1911 թ. Ռուսական հնագիտական ընկերու- թյան հանձնարարությամբ Սիմոնովի հետ միասին գործուղվել է Գառնի և հայտնաբերել "ձկնանման վիշապները": 1915-1916 թվականներին ակադեմի- կոս Հովսեփ Օրբելու հետ մեկնել է Վան, հայտնա- բերել և ուսումնասիրել ուրարտերեն բեռնագիր արձանագրությունները:

Մառի նախագծով և Ժողկոմսովետի 1919 թ. ապրիլի 18-ի ղեկրեռով հիմնվել է նյութական կուլտուրայի պատմության ակադեմիան:

1925 թվականին ՍՍՀՄ գիտական աշխատողնե- րի համամիութենական առաջին համագումարում Մառը ընտրվել է կենտրոնական խորհրդի նա- խագահ: 1929-ին ընտրվել է Համամիութենական կենտրոնական գործադիր կոմիտեի անդամ: 1930 թվականին ընտրվել է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ: 1931-ին նա հիմնել է հաբեթաբանության ինստիտուտը, որը հետագայում վերանվանվեց "Լեզվի և մտածողու- թյան ինստիտուտ": 1929-1934 թվականներին Մառը դասախոսություններ է կարդացել Լենին- գրադի պետական համալսարանում և Փարիզի Սորբոնի համալսարանում:

Գիտահետազոտական աշխատանքների, ինչպես նաև լեզուների ուսումնասիրության նպատակով Մառը շատ ուղևորություններ է կատարել դեպի Կովկաս, Սովետական Միության այլ վայրեր, ինչպես նաև արտասահման: Մեծ է այդ ուղևորու- թյունների արդյունքների դերը ժողովուրդների և լեզուների փոխադարձ կապը, ընդհանրությունները և փոխհարաբերությունները նշելու համար:

1933 թվականին Մառի գիտական-հասարակա- կան գործունեության 45-ամյակի կապակցությամբ նա պարգևատրվեց Լենինի շքանշանով և արժա- նացավ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Մառի ամբողջ կյանքը լավագույն պատկերն է անխուցե գիտնականի աշխատանքի: Իր չափազանց բեղմնավոր գրական-գիտական գործունեությամբ նա սերունդներին թողել է հարուստ հոգևոր ժա- ռանգություն: Նրա տպագիր գիտական աշխատու- թյունների թիվը հասնում է 560-ի: Նա թողել է նաև չափազանց հարուստ ձեռագիր աշխատու- թյունների մի հսկայական ժառանգություն:

Նիկողայոս Մառի դասախոսական գործունեու- թյունն էլ նշանակալի է արդյունավետ է եղել: Նա դաստիարակել է գիտնականների մի փայլուն համաստեղություն՝ Հ. Օրբելի, Ն. Ադոնց, Ի. Ջավա- խաշվիլի, Ի. Մեշյանինով, Գ. Ղափանցյան, որոնց անվան հետ է կապված կովկասագիտության նոր շրջանի պատմությունը:

Նիկողայոս Մառը վախճանվել է 1934 թվակա- նի դեկտեմբերի 20-ին Պետերբուրգում:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Եվրոպայի վայրենացման տարիներին հայ ազգը իր թարգմանություններով հունարենից անփոխա- րիների ծառայություն է մատուցում եվրոպական համամարդկային քաղաքակրթությանը, ոչ միայն պահելով դասական գրականության հիշատակա- րանները, այլև հումագիտության ամենաեռանդուն ախոյան հանդիսանալով և նպաստելով այդ լեզվի



ուսումնասիրությանը Արևելքում և մինչև անգամ Հունաստանում...

Հարևան և մինչև անգամ հեռու ընկած ազգե- րից ո՞րն է, որ օգտված չլինել հայ ազգի կուլտու- րական բարեմասնություններից, վիպասաններից եկող և աշուղներին հասած երկերից, նրա ճար- տարապետական անման վարդապետ արվեստից, նրա այն բացառիկ լեզվագիտական շնորհից, որ թարգմանչական արվեստից ավելի բարձր ար- վեստ է, գիտության և արվեստի միաձուլումը գեղարվեստի մեջ, որ կատարել է հայ ազգը, որը հին դարաշրջաններում ստեղծած է թարգմանու- թյան մի շարք դպրոցներ և տեսակ-տեսակ ոճ ինքնուրույն գրվածքների համար, պատրաստի ձոխ գրական լեզու ժառանգելով ժողովրդական վիպասաններից, նոր դարաշրջանում երկու գրա- կան լեզու մշակելով կենդանի բարբառներից:

Ջաղաքացիական և տնտեսական անցքերը բշում էին տեղից-տեղ, աշխարհից-աշխարհ այս պարմանալի գեղարվեստորեն և գրականորեն օժտված և կիրք ցեղը, որն իր հետ սփռում էր արվեստը, գեղարվեստի ճաշակը և դպրության լույսը, թե հեռու Հյուսիս, Լեհաստանի մեջ ոսկեր- չության արհեստի վարդապետը վարկ տալով, թե հեռու Հարավ, Եթովպացոց աշխարհ, գրակա- նության շարժմանը մասնակից դառնալով:

... Արևելքում հայ մի բուռ ժողովուրդ, ար- համարիված տգիտության բույներում տասնապա- տիկ ավելի, և ճնշված, հարստահարված էր շինարար ձեռքերից օգտվող ազգերի կողմից, երբեմն իր ծննդավայրից Միջերկրական և Սև ծովերից դեն հալածված, այնտեղ էլ կոխան եղած, իր վերջին կայանի մի անկյունի մեջ հետ մղված և 20-րդ դարում այնտեղից էլ դուրս բշված ցիր ու ցան դառնալու սարսափների մատնված, այս "սծու փոքր"... հայոց ազգը ոչ միայն հաբեթական վիպասանության անդրանիկ ժառանգներից մինը, այլև բոլոր մույն համամարդկային աղբյուրից բխած կուլտուրական ավանդի անդրանիկ ժա- ռանգներից լինելով, նրա ամբողջության հավա- տարին պահողն, աճեցնողն ու առատաձեռն ցանողն էր Արևելքում և Արևմուտքում:

Ախթամարի վանքը, քանդակագործության հրաշքը, 11-րդ դարում քանդված Անիի ինքնա- վարության եղանակը-խառնիջվությունը, Դվինի և Շահապի վանքի ժողովները, Վարդանանց քաջագործությունները, նրանց նահատակու- թյունը, համաշխարհային առևտրին ծառայող 9 կամարակապ, սքանչելի ճարպկությամբ կա- ռուցված կամուրջները մի փոքրիկ գետի՝ Ախուրյանի վրա և հազար ու մեկ այլ հայոց ազգի կամ ազգայինների ստեղծագործություն- ները Հայաստանից էլ դուրս ի՞նչ են, եթե ոչ հայոց լեզու, հայկական լեզու: